ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 19.09.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Արտյոմ Գրիգորյանը, Մեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը,Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Մեյրան Ադաբեկյանը և Արևիկ Լոբյանը:

Նիստից բացակայում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու անդամ *Վահե Դոխոյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը , Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ *Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.25-ին նիստը հայտարարեց բացված և առաջարկեց վերանայել նախապես հայտարարված օրակարգը և հանել 3-րդ հարցը, քանի որ ՀՀ կառավարության կողմից հատկացված ֆինանսական միջոցներով վերականգնվելու է Աղայան փողոցի Գուգարք համայնք տանող հատվածը և համայնքի բյուջեից այդ նպատակով հատկացումների կարիքը չկա:

Նիստը վարողն առաջարկեց փոփոխություն կատարել օրակարգում ընդգրկված հարցերի հերթականության մեջ և հաստատել նոր խմբագրությամբ օրակարգի 5-րդ կետը տեղափոխել 2-րդ կետ, քանի որ նիստին ներկա հյուրերը՝ Իրանից գործարար *Հուսեյն Յաղուբպուրիին* և նրա գործընկեր *Արայիկ Ասրյանը*, ժամանակի սղության պատճառով խնդրել էին իրենց

հարցը լսել առաջնահերթ: «Ռեդ Սանե ԿաՇամիր գրուպ» ընկերությունը պատրաստվում է ներդրումներ կատարել Վանաձորում:
Նիստը վարող առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:
Միաձայն՝ 14 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ , ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. սեպտեմբերի 19-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. «Ռադ Սանե Կաշամիր գրուպ» ՍՊԸ-ին Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի թիվ 6 («Լոռի ՃՇՇ» ՓԲԸ) հասցեի տարածքի հարավարևմտյան մասում գտնվող հողամասը նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

3. *Վանաձոր համայնքի համայնքային ենթակայության թիվ 35 մանկապարտեզում* ներառական կրթությամբ խումբ բացելու մասին

զեկ. Գ.Բաղյան

4. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

5. Վանաձոր համայնքի Բաղրամյան պողոտա թիվ 94/1 հասցեում գտնվող խանութը ուղղակի վաճառքի ձևով Անդրանիկ Վազգենի Մարուքյանին օտարելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

6. Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 56/1 հասցեում գտնվող վարսավիրանոցը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Ժորա Կարապետյանին օտարելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

7. Լևոն Եղիշի Խաչատրյանին նվիրված հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

8. Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը լուծելու և Վանաձոր համայնքի ավագանու 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ 58 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

9. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին
զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ-ին Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի թիվ 6 («Լոռի ՃՇՇ» ՓԲԸ) հասցեի տարածքի հարավարևմտյան մասում գտնվող հողամասը նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ-ին Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի թիվ 6 («Լոռի ՃՇՇ» ՓԲԸ) հասցեի տարածքի հարավարևմտյան մասում գտնվող հողամասը նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ *Ս.Աբուլյանը*:

Հուսեյն Յաղուբպուրին և նրա գործընկեր *Արայիկ Ասրյանը* ներկայացրին իրենց ծրագրերը, իսկ ավագանու անդամները հարցեր ուղղեցին հյուրերին:

Հուսեյն Յաղուբպուրին և նրա գործընկեր *Արայիկ Ասրյանը* պատասխանեցին հարցերին:

Լրացուցիչ տեղեկություններ ներկայացրեց նաև նիստը վարող:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը նոր խմբագրությամբ՝

««Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ ընկերությանը Վանաձոր համայնքի Շիրակի խճուղի թիվ 6 («Լոռի ՃՇՇ» ՓԲԸ) հասցեի տարածքի հարավարևմտյան մասում գտնվող հողամասը նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին:»

Քվեարկությամբ, կողմ՝ 14 , ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի համայնքային ենթակայության թիվ 35 մանկապարտեզում ներառական կրթությամբ խումբ բացելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի կրթության և մշակույթ բաժնի պետ *Գ.Բաղյանը*

Զեկուցողին հարցեր ուղղեցին ավագանու անդամներ *Գայանե Քալանթարյանը* և *Խորեն Վարդանյանը*:

Հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ նիստը վարողի և զեկուցողի կողմից:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 , ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ *Ս.Աբուլյանը:*

Նիստը վարողը կարևորեց ավագանու դերը աճուրդային նվազագույն մեկնարկային գներին հավանություն տալու մասին հարցին, սակայն հիշեցրեց, որ ավագանին կարող է և ավելի բարձր մեկնարկային գին սահմանել, եթե աճուրդի ներկայացված գույքը առանձնակի մրցակցային հետաքրքրություն ներկայացի հավանական մասնակիցների մոտ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14 , ընդունվեց որոշում:

Մինչ օրակարգի հարցերի հարցին անցնելը նիստ վարողն առաջարկեց քննարկել Վանաձորի տարածքում կիսավարտ շինությունների և չօգտագործվող հողամասերի վերաբերյալ ավագանու կողմից ՀՀ կառավարությանն ուղղված ուղերձի հարցը, որով կառաջարկվի կառավարությանը հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և նման գույքի նկատմամբ սահմանել գույքահարկի և հողի հարկի անհամամետ ավելի բարձր գներ, հաշվի առնելով , որ դրանք խաթարում են քաղաքի ճարտարապետական տեսքը:
Նման որոշումը կարող է խթանել սեփականատերերին ավարտուն տեսքի բերել իրենց կառույցները և կառուցապատել հողամասերը::
Ավագանու անդամները բանավոր կարգով հավանություն տվեցին այս առաջարկին և հանդես եկան հանդիպակաց առաջարկությամբ, նման ուղերձը, որպես ավագանու օրակարգի հարց, ընդգրկել հաջորդ նիստում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Բաղրամյան պողոտա թիվ 94/1 հասցեում գտնվող խանութը ուղղակի վաճառքի ձևով Անդրանիկ Վազգենի Մարուքյանին օտարելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ *Ս.Աբուլյանը:*

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14 , ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոցի թիվ 56/1 հասցեում գտնվող վարսավիրանոցը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Ժորա Կարապետյանին օտարելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ *Ս.Աբովյանը*

Ավագանու անդամների կողմից հարցեր չինչեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Լևոն Եղիշի Խաչատրյանին նվիրված հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ *Ս.Աբովյանը*
Ավագանու անդամների կողմից հարցեր չինչեցին: Ավագանու անդամ *Գայանե Քալանթարյանն* առաջարկեց ուշադրություն դարձնել հուշատախտակի վրա գրվելիք տեքստին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը լուծելու և Վանաձոր համայնքի ավագանու 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ 58 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ՝ *Վ.Դավիթյանը*:

Ավագանու անդամների կողմից հարցեր չինչեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել հոկտեմբերի 25-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության: Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում :

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի հոկտեմբերի 25-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը